

Կազմված է 25.01.2011 թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Քաղաքական գիտության  
Հայաստանի ասոցիացիա»

հասարակական կազմակերպության  
հիմնադիր համաժողովի որոշմամբ

« 25 »  01  2011 թ.

Գործադիր տնօրեն՝

Բ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ Է ՉՈՐՍ ՕՐԻՆԱԿԻՑ,

Օրինակ \_\_\_\_\_

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության  
Իրավաբանական անձանց պետական  
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից

« » \_\_\_\_\_ 2011 թ.

Գրանցման N

Վկայականի N

Պետական ռեգիստրի ղեկավար՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

## **Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2011 թ. Երևան

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային), անձանց մասնագիտական շահերի ընդհանրության հիման վրա, ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված կամավոր մասնագիտական հասարակական միավորում է:

1.2 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, անդամության կամավորությունը, անդամության իրավահավասարությունը, ինքնակառավարումը, հրապարակայնությունը, ղեկավարման կոլեգիալությունը:

1.4 Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5 Կազմակերպության լրիվ անվանումն է.

հայերեն՝ Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիա հասարակական կազմակերպություն (ՔԳՀԱ),

անգլերեն՝ "Political Science Association of Armenia (PSAA)" non-governmental organization,

ռուսերեն՝ "Ассоциация политической науки Армении (АПНА)" общественная организация:

1.6 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0019, Բաղրամյան Առաջին նրբանցք, 4-40:

1.7 Կազմակերպությունն ունի կնիք, դրոշմակնիք, խորհրդանիշ, խորհրդանիշի պատկերով ձևաթուղթ և այլ անհատականացման միջոցներ:

1.7.1 Կազմակերպության խորհրդանիշի (կցվում է կանոնադրությանը) պատկերն ու նկարագրությունը՝ շրջանաձև սկավառակի երկու երեսներին հորիզոնական դիրքով պատկերված է բանալի, որի վրա գրված է «VERITAS», սկավառակի եզրից ներս գծված է բանալու եզրերը շոշափող շրջանագիծ, սկավառակի եզրով և շրջանագծով պարփակված հատվածի՝ երկու կետերով բաժանված մասերում ձախից աջ և աջից ձախ գրված է «POLITICAL SCIENCE ASSOCIATION ARMENIA»:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեության նպատակներն ու խնդիրներն են՝

2.1.1 Նպաստել Հայաստանում քաղաքական գիտության զարգացմանը և մասնագիտական կայացմանը՝ ներառյալ քաղաքական գիտության առանձին ճյուղերը՝ քաղաքական տեսությունը, քաղաքական ինստիտուտներն ու գործընթացները, միջազգային հարաբերությունները, հանրային կառավարումը, անվտանգության քաղաքա-

գիտությունը և կոնֆլիկտաբանությունը:

2.1.2 Միավորել Հայաստանում և սփյուռքում գործող մասնագետ-քաղաքագետներին՝ իրենց մասնագիտական ջանքերն ուղղելու Հայաստանի Հանրապետության ազգային խնդիրների արդյունավետ լուծմանը:

2.1.3 Նպաստել հայաստանյան քաղաքական գիտության ազդեցության ընդլայնմանը և կիրառելիությանը քաղաքական որոշումների կայացման գործում, աջակցել ՀՀ-ում քաղաքական գործունեության արհեստավարժությանն ու արդյունավետությանը:

2.1.4 Նպաստել քաղաքագիտության բնագավառում միջազգային համագործակցությանը:

2.1.5 Նպաստել քաղաքագիտական կրթության և դասավանդման զարգացմանը:

2.1.6 Նպաստել հայաստանյան քաղաքագիտական դպրոցի զարգացմանը և քաղաքական մշակույթի տարածմանը, քաղաքագետների գործունեության մասնագիտական և էթիկական նորմերի արմատավորմանը:

2.1.7 Նպաստել քաղաքական գիտության փորձաքննական ներուժի զարգացմանը:

2.1.8 Նպաստել Հայաստանի ազգային անվտանգության քաղաքագիտական ապահովմանը:

2.2 Իր նպատակներին հասնելու համար Կազմակերպությունը կարող է իրականացնել.

- վերլուծական գործունեություն,
- հանրային կարծիքի ուսումնասիրություն,
- ընդունվող քաղաքական որոշումների փորձագիտական աջակցություն,
- քաղաքական և քաղաքագիտական բնագավառում իրականացվող գործընթացների և հրատարակվող աշխատությունների փորձաքննություն,
- քաղաքագիտության դասավանդման առարկաների և ուսումնական նյութերի պատրաստում և փորձաքննություն,
- մասնագետ քաղաքագետների վերապատրաստում,
- գիտական համաժողովներ և սեմինարներ,
- քաղաքագիտական խորհրդատվություն:

2.3 Իր գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով Կազմակերպությունը կարող է իրագործել գիտահետազոտական նախագծեր, կազմակերպել գիտաժողովներ, աշխատանքային հանդիպումներ, սեմինարներ, դասախոսություններ, ինչպես նաև ի դեմս իր անդամների մասնակցել նման միջոցառումներին ՀՀ-ում և արտերկրում:

2.4 Կազմակերպությունը կարող է ունենալ իր գործունեությունն արտացոլող տպագիր հրատարակություններ, ամսագրեր, տեղեկատուներ և գրքեր:

### **3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՎԼՈՒ ԿԱՐԳԸ**

3.1 Կազմակերպության անդամ կարող են դառնալ ֆիզիկական անձինք: Կազմակերպության անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա պետության ցանկացած չափահաս քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձ, ով ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը, ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը և ունի Կազմակերպության մեջ ընդունվելու վերաբերյալ Կազմակերպության խորհրդի անդամի կամ Կազմակերպության առնվազն երկու անդամի երաշխավորություն:

3.2 Կազմակերպության հիմնադիրները կազմակերպության անդամներ են:

3.3 Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետև՝ Խորհուրդ):

3.4 Կազմակերպությունն ունի նաև պատվավոր անդամներ, որոնք հրավիրվում են Կազմակերպության խորհրդի անդամի կամ Կազմակերպության առնվազն երկու անդամի առաջարկով և հրավիրված անձի գրավոր համաձայնության դեպքում հաստատվում են Խորհրդի կողմից: Կազմակերպության պատվավոր անդամ կարող են դառնալ հայաստանյան և միջազգային քաղաքագիտության և քաղաքականության կարկառուն ներկայացուցիչներ, որոնք իրենց գործունեությամբ էական ներդրում են ունեցել քաղաքական գիտության զարգացման, ազգային և միջազգային քաղաքական հիմնախնդիրների լուծման, հակամարտությունների լուծման, խաղաղության հաստատման և անվտանգության ապահովման գործում:

3.5 Խորհուրդը քննարկում է Կազմակերպության անդամության մասին դիմումը այն ստանալուց մեկ ամսվա ընթացքում և որոշում է կայացնում, որի մասին տեեկացնում է դիմողին: Մերժելու դեպքում Խորհուրդը դիմողին պարտավոր չէ ներկայացնելու պատճառները:

3.6 Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից՝ իր համապատասխան դիմումի հիման վրա:

3.7 Կազմակերպության անդամությունից զրկումը տևի է ունենում Խորհրդի որոշմամբ՝ Կանոնադրական և կարգապահական սկզբունքները չկատարելու, մասնագիտական թերացումների և օրենսդրական խախտումների պատճառով:

#### **4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի.

- ընտրել և ընտրվել Կազմակերպության բարձրագույն և այլ մարմիններում,
- Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ,
- սպառիչ տեեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին,
- ազատ դուրս գալ Կազմակերպությունից,
- Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը,
- մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,

- անվճար ստանալ Կազմակերպության հրապարակումները,
- Կազմակերպության գործադիր տնօրենի (Գործադիր տնօրեն), Կազմակերպության Խորհրդի (Խորհուրդ), Կազմակերպության նախագահի (Նախագահ) և ղեկավար մյուս մարմինների ոչ կանոնադրական գործունեության դեմ գրավոր բողոքարկել Համաժողովին կամ դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

#### 4.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

- հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,
- կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,
- մուծել մուտքի վճար և ամսական անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Խորհուրդը: Կազմակերպության պատվավոր անդամներն ազատվում են անդամավճար մուծելու պարտավորությունից:
- բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները:

4.3 Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության համաժողովի կամ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից զրկում:

4.4 Կազմակերպության պատվավոր անդամն ունի նույն իրավունքներն ու պարտականությունները՝ բացառությամբ 4.1 կետի 1-ին ենթակետի և 4.2 կետի վերջին 3 ենթակետերից:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2 Կազմակերպությունը կարող է ունենալ առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանումներով կլոր կնիք, դրոշմ, բլանկ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:

5.3 Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.4 Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

- տեսկատվություն տարածել իր գործունեության մասին,
- հիմնադրել լրատվության միջոցներ, այդ թվում՝ հրատարակել մասնագիտական

ամսագրեր,

- կազմակերպել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր,
- ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տնական ինքնակառավարման մարմիններում,
- իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով,
- ունենալ հաստիքային և պայմանագրային աշխատողներ,
- օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք,
- օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք,
- կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ,
- ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով,
- իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

## **6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **6.1 Կազմակերպությունը պարտավոր է՝**

- ցանկացած ֆիզիկական անձի պահանջով յոթ օրացուցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը,
- օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
- իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,
- պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր

բարձրագույն և այլ մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուչիչներին ներկա գտնվել Կազմակերպության ժողովին,

- օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տնեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,
- առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին, սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար.
- վարել իր անդամների հաշվառումը,
- առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացույցային օրվա ընթացքում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի մասին տվյալներ:

## **7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

7.1 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Համաժողովին: Կազմակերպության կառավարման մարմիններն են Համաժողովը, Խորհուրդը, Նախագահը և Նախագահի տեղակալը, Գործադիր տնօրենը:

7.2 Համաժողովը իրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Համաժողովի իրավիրման, դրա անցկացման կարգի և ժամկետների մասին որոշում է Խորհուրդը: Խորհրդի կողմից սահմանված կարգով Համաժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

7.3 Կազմակերպության արտահերթ Համաժողովը իրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ Կազմակերպության վերահսկիչի պատճառաբանված պահանջով, Խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա ընթացքում:

7.4 Համաժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

7.4.1 Կազմակերպության կանոնադրության հաստատումը և փոփոխումը:

7.4.2 Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը, կազմի փոփոխումը:

7.4.3 Կազմակերպության լուծարման և վերակազմակերպման մասին որոշումների ընդունումը:

7.4.4 Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը:

7.5 Համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան

մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների, կամ պատվիրակների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ: Կազմակերպության արտասահմանյան և պատվավոր անդամները կարող են մասնակցել Համաժողովի աշխատանքին հեռահար կապի միջոցով և իրենց կարծիքը քննարկվող որոշումների վերաբերյալ հայտնել գրավոր ձևով:

7.6 Խորհուրդն ընտրվում է Համաժողովի կողմից երկու տարի ժամկետով: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Խորհրդի երկու անդամների կամ Կազմակերպության վերահսկիչի (Վերահսկիչ) պահանջով:

#### 7.7 Խորհուրդը.

- հաստատում է Նախագահի և Գործադիր տնօրենի հաշվետվությունները, այդ թվում՝ Համաժողովին ներկայացվող հաշվետվությունը,
- առաջարկություններ է ներկայացնում Համաժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,
- ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում անդամությունից, հանդես է գալիս պատվավոր անդամության առաջարկով,
- Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ,
- ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ համաժողովների միջև ընկած ժամանակաշրջանում,
- սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը,
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մեկ միլիոն դրամը գերազանցող արժողությամբ գույքը (ցանկացած տեսակի և չափի),
- ստնծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, կառուցվածքային ստորաբաժանումները, առանձնացված ստորաբաժանումներ /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները,
- հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը,
- սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց վարձատրության կարգը և չափը,
- հաստատում է Կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշվետվությունները,
- իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ համաժողովի



բացառիկ իրավասությանը վերապահվածներից:

7.8 Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների երկու երրորդից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Նախագահի ձայնը վճռորոշ է:

7.9 Նախագահին ընտրում է Համաժողովը՝ Խորհրդի անդամների կազմից, երկու տարի ժամանակով:

7.10 Նախագահը.

- ղեկավարում է Խորհրդի աշխատանքները և վարում է նրա նիստերը,
- առանց լիազորագրի ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ներկայացնում է Կազմակերպությունը վերլուծական գործունեություն, հանրային կարծիքի ուսումնասիրություն, ընդունվող քաղաքական որոշումների փորձագիտական աջակցություն իրականացնելու, փորձաքննություններ կատարելու, գիտական և կրթական միջոցառումներ անցկացնելու, խորհրդատվություններ տրամադրելու, կազմակերպության կողմից կամ նրա մասնակցությամբ անցկացվող այլ միջոցառումների ժամանակ:

7.11 Նախագահի տևակալին ընտրում է Համաժողովը՝ Խորհրդի անդամներից, երկու տարի ժամկետով: Նախագահի տևակալը փոխարինում է Նախագահին նրա բացակայության ժամանակ կամ վերջինիս լիազորությամբ:

7.12 Գործադիր տնօրենն ընտրվում է Համաժողովի կողմից երկու տարի ժամանակով:

7.13 Գործադիր տնօրենն ի պաշտոնե Խորհրդի անդամ է և

- հանդիսանում է Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավար
- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի, բոլոր ոլորտներում՝ բացառությամբ Նախագահին վերապահված ոլորտների,
- արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր,
- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ,
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի հաստիքացուցակը,
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողության գույքը (ցանկացած տեսակի և չափի):

7.14 Կազմակերպության Վերահսկիչը ընտրվում է Համաժողովի կողմից երկու տարի ժամանակով: Խորհրդի անդամները, Նախագահը, Նախագահի տևակալը և Գործադիր տնօրենը չեն կարող լինել Վերահսկիչ:

7.15 Կազմակերպության վերահսկիչը որոշումներն ընդունում է միանձնյա: Վերահսկիչը կարող է Նախագահից, Գործադիր տնօրենից և այլ աշխատողներից պահանջել Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն:

7.16 Վերահսկիչը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Համաժողովին՝ Կազմակերպության գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին:

## **8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

8.1 Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

8.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

8.3 Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել.

- Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,
- բանկերից ստացված վարկերը,
- դրամաշնորհները,
- բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
- հովանավորներից /այդ թվում՝ օտարերկրյա/ ստացված գումարները,
- Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

8.4 Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

8.5 Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

8.6 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

## **9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ**

9.1 Կազմակերպությունը կարող է լուծարվել Համաժողովի կամ դատարանի որոշմամբ: Համաժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

9.2 Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Համաժողովի

որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա փոխանցում է պետական բյուջե:

9.3 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

